ՀՀ ԿԳՆ Նախարար
Հ. Մկրտչյանին

Արամ Մարտի Օսիպոսյանից
(Երևան, Ավան, Մ. Քարամանյան
38/2. 720բն. հեռ. 629722
099344963, 055344963)

Դիմում

Խնդրում եմ ինձ ընդունել ՀՀ ԿԳ Նախարարին
կից հանձնաժողովի կազմում:
Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.
1. Անձի նույնականացնող վկայական 2 բնօրինակ
2. Հանձնարարական վերլուծություն

Դիմող /Ա. Օսիպոսյան/
03.05.2016

10729-16
03 05 16

ՀԱԿԻՐՃ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՆ գործունեության և կրթության բնագավառում իրականացվող քաղաքականության

Կրթության բնագավառում առկա են բազմաթիվ մարտահրավերներ, որոնց հայտնաբերմանը, դասակարգմանն ու լուծմանն են նպատակաուղղվել ԿԳՆ ջանքերը նախորդ տարիներին: Այդ քաղաքականության հակիրճ վերլուծության արդյունքում առանձնացրել եմ կրթության ոլորտի ներկա փուլի հիմնախնդիրներից մի քանիսը, որոնց հաղթահարման համար կան անելիքներ:

1. Նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածության մակարդակը դեռևս մնում է անբավարար, հատկապես գյուղական համայնքներում և սոցիալապես անապահով ընտանիքների շրջանում: Հաճախ դրանց անբավարարությունը վերագրվում է ֆինանսների սղությանը, սակայն այդ բացը կարելի է հաղթահարել ունեցած նյութատեխնիկական բազան առավել նպատակային օգտագործելով (մասնավորապես դպրոցների, մշակույթի տների շենքային պայմանները և գույքը):
2. Վերջին տարիներին բավական աշխատանք է տարվել դպրոցից դուրս մնացած և սահմանափակ կարողություններ կամ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին որակյալ հիմնական կրթություն տալու ուղղությամբ: Սակայն դպրոցներում կա առանձնահատուկ պայմանների, գույքի և հատկապես որակյալ, վերապատրաստված մասնագետների կարիք: Այդ երեխաների տեղափոխման, տեղաշարժման և ինտեգրման հիմնական հոգսը մնում է ծնողների վրա:
3. Չնայած տարվող աշխատանքներին՝ ուսուցչակազմը և վարչական մարմինները աշխատանքի կազմակերպման ժամանակակից մեթոդաբանության և տեխնոլոգիաների կարիք ունեն: Անհրաժեշտ է նրանց վերապատրաստման նոր մեթոդներ և մանկավարժների մասնագիտական առաջխաղացման արդյունավետ համակարգ: Բացակայում է ուսուցչի, դպրոցի աշխատանքի վերջնական արդյունքի հիման վրա գնահատման և վարկանիշավորման հստակ մեխանիզմները, ինչը բերում է թղթային և ձևական պրակտիկայի՝ դրանից բխող բացասական հետևանքներով:
4. Ավագ դպրոցների ցանցի ստեղծումը բարեփոխումների ամենաարժեքավոր ձեռքբերումներից է: Սակայն դպրոցների ընտրության ոչ հասկանալի մեխանիզմը, շատ տեղերում, հատկապես մարզերում, ոչ ռացիոնալ քանակը և տեղաբաշխումը բերեցին միջոցների անիմաստ

վատնումի: Մյուս կողմից, ամենամեծ թերությունը՝ վարչական և մանկավարժական կադրերի ոչ մրցութային ընտրությունը, հեղինակություն վայելող և բարձրակարգ մասնագետների պակասը բերեցին նրան, որ այսօր կայացած և հասարակության մեջ հեղինակություն վայելող ավագ դպրոցներ կարելի է մատների վրա հաշվել: Ավագ դպրոցներում, բացի դասաժամերի մեխանիկական փոփոխությունից, ոչ մի բովանդակային փոփոխություն չի ներդրվել. մասնագիտական հոսքերը միմյանցից տարբերակվում են ընդամենը դասաժամերի քանակով: Չկա լուրջ մասնագիտացում, բովանդակային տարբերություն միջնակարգ դպրոցների համեմատությամբ, ավարտական քննությունների տարբերակում: Բացակայում է կապը բուհերի և շահագրգիռ կազմակերպությունների հետ:

5. Կրթական չափորոշիչները չեն կանոնակարգում դպրոցին, ուսուցչին ներկայացվող պահանջները, ինչի արդյունքում գրեթե չի օգտագործվում ուսուցիչների կողմից: Բացակայում է վերահսկողությունը և պատասխանատվությունը դրանց կատարման նկատմամբ: Կարիք կա անցում կատարել տարբեր երկրներում կիրառվող՝ դպրոցի արդյունավետության գնահատման և ֆինանսավորման՝ կրթության և դաստիարակության ռեալ ցուցանիշների ու վերջնական արդյունքների հիման վրա:

6. Կրթական ծրագրերը և դասագրքերը վերջին տարիներին ենթարկվեցին մասնակի փոփոխությունների: Իրականում դրանց գերակշռող մասը շարունակում են մնալ ծանրաբեռնված, ակադեմիական ոճի, տեսական ուղղվածության, կյանքի և մասնագիտական գործունեության համար բավարար կիրառական ունակություններ և հմտություններ չձևավորող: Թեմաների ծավալները, նյութի մատուցման ոճը հաճախ չեն համապատասխանում տարիքային նախատեսված խմբերին: Բացակայում են դասագրքերի մշակման, ներդրման մանկավարժահոգեբանական լուրջ ուղեցույցներ՝ հեղինակային խմբերի համար: Նույն վիճակն է նաև խնդրագրքերի և ուսումնաօժանդակ նյութերի ներդրման ասպարեզում. դրանց գերակշռող մասը չի խթանում ստեղծագործական միտքը, կարողությունների և հմտությունների ձևավորումը, չի բացահայտում սովորողների իմացության իրական պատկերը:

Մասնավորապես, դրանով են պայմանավորված TIMSS միջազգային գնահատումներում մեր աշակերտների արդյունքները 4-րդ և 8-րդ դասարաններում: Հայ աշակերտները հիմնականում դժվարանում են ոչ ստանդարտ, կիրառական, կարողությունների բարձր մակարդակ պահանջող առաջադրանքներում:

Ավագ դպրոցներում կարիք կա խաղային մեթոդների, տրամաբանության և կարողությունների զարգացմանը միտված ուսումնական նյութերի: Թույլ է համագործակցությունը դասվարների և դասղեկների, դասավանդող ուսուցիչների միջև: Որպես հետևանք՝ կրթության տարբեր օղակների միջև փոխանցելիության ու պատասխանատվության ցածր մակարդակ, ծրագրերի խզում, միջառարկայական թույլ կապեր և ինտեգրված դասընթացների պակաս:

7. Սովորողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքը, աշակերտների վարքը, լրջությունը, ինքնակառավարման մակարդակը հեռու են բավարար լինելուց: Շատ դպրոցներում օրագրերը դադարել են դպրոցի և ծնողի միջև կապի, համագործակցության միջոց լինելուց. դրա փոխարինումը այլ, առավել ևս էլեկտրոնային միջոցների ռեալ և անարդյունավետ է: Կարիք կա մշակելու իրական գործող պատասխանատվության մեխանիզմներ ծնողի՝ իր երեխայի վարքի և առաջադիմության համար:

8. Վերջին տարիներին որոշ դպրոցներ մասամբ համալրվել են ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներով: Սակայն ուսումնական գործընթացում դրանց կիրառությունը խիստ սահմանափակ է: Հատկապես մեծ պահանջարկ կա էլեկտրոնային ուսումնական նյութերի, առանձին առարկայական դասերի, գործնական և լաբորատոր աշխատանքների: Կարևոր է նաև հանրային հեռուստատեսությամբ ուսումնական հաղորդումների հեռարձակման վերականգնումը, դրանց կիրառումը դասապրոցեսներում:

9. Բարեփոխումների գործող փուլում բացակայում է իրական մրցակցային, նորարությունը խթանող, լավ ու վատ աշխատանքները տարբերակող միջավայրը՝ մարզային կառույցների, դպրոցների, ուսուցիչների և աշակերտների համար: Չկա ոչ համագործակցության, ոչ էլ մրցակցության ռեալ միջավայր. այդ ամենը սահմանափակվում է միայն թղթային, ցուցադրական, հովանավորչական և ձևական մակարդակներում:

Լուրջ մոտեցման պակաս կա տաղանդավոր, ոչ ստանդարտ մտածողության տեր աշակերտներին հայտնաբերելու, խրախուսելու և նրանց հետագա առաջընթացն ապահովելու ուղղությամբ (հատկապես բնագիտական ուղղվածությամբ աչքի ընկնող): Անհրաժեշտություն կա սախանդույթ դարձնել բազմապիսի ազգային ստուգատեսների, մրցույթների կազմակերպումը: Միայն առարկայական օլիմպիադաների արդյունքները չեն կարող լինեն կրթության մակարդակի գնահատական:

10. Սովորողների գնահատման համակարգը կարիք ունի կատարելագործման: Ներդպրոցական գնահատումը պետք է լինի վարչական աշխատողների և մասնախմբերի ղեկավարների թիվ մեկ խնդիրը: Թեմատիկ և ամփոփիչ գրավոր աշխատանքները պետք է դառնան համընդհանուր բոլոր դպրոցների համայ և կազմակերպվեն համապատասխան վերահսկողության պայմաններում: Ներկայիս 10 միավորային գնահատման համակարգը իրականում 6 միավորային է, քանի որ պարտադիր կրթությունը՝ առանց վերաքննությունների և կրկնապրեցիների, դարձել է դպրոցների վարկանիշային ցուցանիշի տարր: Այդպես էլ գործածվում չապրեց ուսուցողական, ոչ միավորային գնահատումը:

11. Բացակայում են գնահատման օբյեկտիվ մեխանիզմները: Ավարտական քննությունները դարձել են «ներքին անթափանց խոհանոցի» քննություններ: Կարիք կա, որ ավարտական քննությունները կազմակերպվեն միասնական քննություններին համարժեք՝ արդյունքները հավաստի և վերլուծության համար արժանահավատ դարձնելու, դպրոցի, ուսուցիչների և աշակերտների պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով (դրա փորձն արդեն կա ԼՂՀ-ում):

Լիարժեք չի օգտագործվում Գնահատման և թեստավորման կենտրոնի ներուժը՝ պարբերաբար արտաքին ընթացիկ գնահատումներ անցկացնելու և վերլուծելու ուղղությամբ: Այդ արդյունքները ոչ միայն կտան կրթության համակարգի, յուրաքանչյուր մարզի և կոնկրետ դպրոցի սովորողների գիտելիքների ընդհանուր պատկերը, այլև դրանց վերլուծությունը հարուստ նյութ կտրամադրի կրթության ռազմավարությունը մշակողներին, ուսուցիչների վերապատրաստողներին, ծրագրեր, թեստեր մշակողներին ու դասագրքերի հեղինակներին:

12. Ժամանակն է վերանայել ողջ քննական համակարգը: Դա վերաբերում է և՛ հիմնական դպրոցի ավարտական, և՛ միջնակարգ կրթության պետական ատեստատ ստանալու քննություններին: Ժամանակն է անցնել ավագ դպրոցների հոսքային դասարաններ ընդունվելու պարտադիր ընդունելության քննությունն չրի, ինչպես դա արվում է մասնավորապես «Ֆիզմաթ», «Քվանտ» և «Ենյր» վարժարաններում: Այլապես ավագ դպրոցում սովորելն արժեզրկվում է, դառնում է ուսումնառության շարքային, ոչ բարձր կարգի աստիճան, պակասում է սովորողների պատասխանատվության մակարդակը, լրջությունը և որպես կրթության հաջորդ փուլ անցնելու նախապատրաստական աստիճանի:

13. Բուհական համակարգում թույլ է կապը շահագրգիռ նախարարությունների, գործարար միջավայրի, գործատուների, դոնոր կազմակերպությունների և բուհերի միջև: Պրակտիկաները

[illegible] ձևական, սնուցուտ մակարդակի, չեն նպաստում աշխատաշուկայում [illegible] իրենց տեղը գտնելու խնդիրների լուծմանը: Մյուս կողմից, ուսանողության մոտ [illegible] բացակայում է մրցակցային ոգին, կրթության հաջորդական սանդղակներում իրենց [illegible] ցանկությունը, քանի որ աշխատանքի տեղավորվելիս ոչ միշտ են իրենց տեղը գտնում բարենպաստ, ներուժ և ասելիք ունեցող ուսանողները: Ցածր մակարդակի վրա է օտար [illegible] ուսուցումը, դրա բովանդակային տարբերակումն ըստ կոնկրետ [illegible] ուղղությունների, օտարալեզու մասնագիտական գրականության պակասը, [illegible] նը և ոչ լիարժեք օգտագործումը:

[illegible] դրություններում ուռուցք է նախորդ դարի զուտ ակադեմիական ոճի մեջ, բացակայում [illegible] գործնական աշխատանքների, պրոբլեմային իրավիճակների քննարկման [illegible]: Նույն ձևով կազմակերպվում են ընթացիկ քննությունները, հնացած, միայն [illegible] վրա հիմնված թեստերով, որոնք կարելի է հաղթահարել հուշելով ու [illegible]: Քննական թեստերը հիմնականում կազմվում են չհիմնավորված թեմատիկ [illegible] առաջ տալել ուշագրավ է, գնահատման անհասկանալի սանդղակներով: Ուստի [illegible] հարմարվելով առկա պահանջներին, հույսը դնում է միայն զարտուղի [illegible] և նվազագույն գնահատական փախցնելու վրա:

[illegible] մեր դարաշրջանում կա շահագրգիռ մասնագետների մշտապես գործող, անկախ, առաջնորդող [illegible] ոգեշնչվեն իրենց կենսագրությամբ, կենսակերպով ասելիք ունեցող ավագ և [illegible] կրթության, գիտության մասնագետները: Վերջիններս այս տարիներին [illegible] մնացել՝ հույսները կտրելով որևէ էական բարեփոխումից:

Պետք կա մշակել կրթության համակարգի իրական մոնիտորինգի տարեկան և [illegible] աշխատանքային պլաններ, ներդնել դրանց կատարման և վերահսկողության [illegible] պատասխանատուներ, որոնք հրապարակայնորեն կներկայացնեն [illegible] տարեկան հաշվետվություններ՝ կրթության ռեալ, իրական շարժի և [illegible] լուծման, նաև բացթողումների վերաբերյալ:

[illegible] ամփոփումից ելնելով առանձնացրել եմ հարցերից մի քանիսը և առաջարկել [illegible] լուծման իմ տարբերակներից միայն մի մասը:

Արամ Ծատուրյան

02.05.2016

ԱՐԱՄ ՄԻՇԱՅԻ ԾԱՏՈՒՐՅԱՆ

Մ. Բաբաջանյան փ. 38 շ. 720 բն. Երևան, 375012, ՀՀ
(+ 374-010) 55-23-69 (աշխ.), (+374-010) 62-97-22 (տուն), (+374-099) 34-49-63 (բջջ.)
aram – t0@rambler.ru

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մանկ. գիտությունների թեկնածու՝ Սիմետրիայի մեթոդաբանական սկզբունքը ֆիզիկայի դասավանդման պրոցեսում, ԾԴՄ, ՌԴ Սանկտ-Պետերբուրգի ՄՀ, դեկտեմբեր, 1991:

Հետազոտող ուսուցիչ՝ 1995:

Բարձրագույն կրթություն՝ Վանաձորի ՊՄԻ, ֆիզիկայի բաժին, գերազանցության դիպլոմ, 1977-1981: ՌԴ Սանկտ-Պետերբուրգի ՄՀ-ի ասպերանտուրա, հայցվոր, 1988-1991: Վանաձորի ՊՄԻ-ի ՀՄ ֆակուլտետ՝ Երիտասարդ դասախոսի որակավորում, 1981:

Միջնակարգ կրթություն՝ թիվ 19 միջնակարգ դպրոց, Վանաձոր, 1967-1977:

Վերապատրաստում՝

- ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքի ավագ դպրոցներ, 1999:
- Համակարգչային ծրագրեր, անգլերեն, հաշվապահություն, 2003:
- Թեստաբանություն, 2005–2014:
- Գնահատման մեթոդաբանություն, 2010-2015:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՈՒՆ

ԳԹԿ, թեստաբանության բաժին, գլխավոր մասնագետ	2005, մինչև օրս
Վանաձորի թիվ 3 դպրոց, ուսուցիչ	2003-2004
Վանաձորի թիվ 3 դպրոց, տնօրեն և ուսուցիչ	1992-2003
Գուգարքի շրջժողկրթբաժին, մեթոդիստ	1990-1992
Գուգարքի շրջ. Բազումի դպրոց, ուսուցիչ	1981-1990
Երևան, թիվ 20 հիմնական դպրոց, ուսուցիչ	2012, մինչև օրս

Ընթացիկ, ավարտական և միասնական քննությունների թեստեր մշակող ուսուցիչներին վերապատրաստող խմբի անդամ:

Ընթացիկ գնահատման մեթոդաբանության ուսուցիչներին վերապատրաստող խմբի անդամ:

ԴԱՍԱՎԱՆԴԱԾ ԱՌԱՐԿԱՆԵՐ

- Ֆիզիկա, աստղագիտություն, քաղաքացիական կրթություն:

ԱՆՁՆԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քաղաքացիություն՝	Հայաստանի Հանրապետություն
Ծննդյան տարեթիվ՝	Մարտ 20, 1960, Վանաձոր
Լեզուներ՝	Հայերեն, ռուսերեն, անգլերեն (բառարանով)
Նախասիրություններ՝	Հոգեբանություն, ավանդական բժշկություն

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հիպերբոլի և նրա մի քանի հատկությունների մասին. Ֆիզիկան և մաթեմատիկան դպրոցում, համահեղինակ, էջ 38-40, 4, 1988 թ:
- Համակցված խնդիրների լուծման արդյունավետությունը միջնակարգ դպրոցի ֆիզիկայի դասընթացում, Լենինգրադ, էջ 123-130, 1989:
- Համաչափության մեթոդաբանական սկզբունքը ֆիզիկայի դպրոցական դասընթացում. Միջբուհական գիտական հոդվածների ժողովածու, Լենինգրադ, էջ 91-95, 1991:
- Համաչափության մեթոդաբանական սկզբունքը միջնակարգ դպրոցի ֆիզիկայի դասընթացում. Մեթոդական հանձնարարականներ, Լենինգրադ, համահեղինակ, 50 էջ, 1991:
- Սիմետրիայի մեթոդաբանական սկզբունքը դպրոցական ֆիզիկայի դասավանդման պրոցեսում. Մեթոդական ձեռնարկ, համահեղինակ, Լենինգրադ, 1991:
- Համաչափության մեթոդաբանական սկզբունքի կիրառությունը միջնակարգ դպրոցում. Չեյաբինսկ, էջ 69, 1992:
- **Ֆիզիկայի ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու, ուսուցչի ձեռնարկ, համահեղինակ, ԾԻԳ, 211 էջ, 2007:**
- Ֆիզիկա. պետական ավարտական և միասնական քննություններին նախապատրաստվելու համար, հաստատված ԿԳՆ ԿԱԻ կողմից որպես ուսումնաօժանդակ ձեռնարկ, ՎԷԼԱՍ Պրինտ, 321 էջ, 2008, 2012:
- Ֆիզիկա. տեղեկատու, բուհի դիմորդների համար, ՎԷԼԱՍ Պրինտ, 160 էջ, 2014:
- Ֆիզիկա. տեղեկատու, 7-9 դասարանցիների համար, ՎԷԼԱՍ Պրինտ, 135 էջ, 2014:
- **Կրթական համակարգի վերահսկողությունը և գնահատումը. Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, էջ 112, 2008:**
- Քննությունների կազմակերպումը տարբեր երկրներում, Հանրակրթություն. գնահատում և թեստավորում, էջ 41, 1, 2008:
- Ամերիկյան կրթական համակարգը, Հանրակրթություն. գնահատում և թեստավորում, էջ 60, 2, 2008:
- Ուսուցման արդյունքների և գնահատման խնդիրները, Հանրակրթություն. գնահատում և թեստավորում, էջ 51, 3, 2008:
- Ֆիզիկա. թեստային առաջադրանքների և խնդիրների ժողովածու, պրակ 1, 2 և 3, Երևան, ՎԷԼԱՍ Պրինտ, 2009, 2015:
- **Ֆիզիկա. ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ. Ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, համահեղինակ, ԾԻԳ, 2009:**
- 2009 թվ. ֆիզիկայից միասնական քննությունների արդյունքները և դրանց վերլուծությունը. Համահայկական II կրթական գիտաժողովի նյութեր, էջ 23, 2009:
- Ֆիզիկա. 7 թեստ, 9-րդ դասարանի ավարտական քննությանը նախապատրաստվելու համար, Երևան, ՎԷԼԱՍ Պրինտ, 2010:
- Ֆիզիկա. 5 թեստ, պետական ավարտական և միասնական քննություններին նախապատրաստվելու համար, Երևան, ՎԷԼԱՍ Պրինտ, 2011:
- Ֆիզիկա առարկայից դիմորդներին միասնական քննությունների նախապատրաստությունը. Միջազգային գիտական կոնֆերանսի նյութեր, էջ 173, 2011:

- Ֆիզիկա. թեստային առաջադրանքների և խնդիրների ժողովածու, 7, 8 և 9 դասարանցիների համար, Երևան, ՎԷԼԱՍ Պրինտ, 2009, 2010, 2011:
- Դիմորդներին Ֆիզիկա առարկայից քննություններին նախապատրաստելու մի քանի հարցեր. Հանրակրթություն. գնահատում և թեստավորում, էջ 48, 9, 2012:
- Ֆիզիկա առարկայից 8-րդ դաս. անցկացված արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերլուծություն. Համահայկական III կրթական գիտաժողովի նյութեր, էջ 82, 2012:
- Ֆիզիկա. Տետր թեմատիկ՝ կիսամյակային ամփոփիչ գրավոր աշխատանքների համար, 7-9 դաս. երաշխավորված ԿԳՆ-ի կողմից, Էդիտ Պրինտ, 2014:
- Ֆիզիկա. պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց, համահեղինակ, պատասխանատու, ԳԹԿ, 2008-2016:
- Ֆիզիկայի պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան-3, համահեղինակ, Էդիտ Պրինտ, 2015:

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐ

Մասնակցություն և ելույթներ ավելի քան 30 հանրապետական և միջազգային կոնֆերանսներում և գիտաժողովներում՝ 1980-2015:

Արամ Ծատուրյան
01. մայիս, 2016